



**USAID**  
FROM THE AMERICAN PEOPLE

«ԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՋԱՂԵՄ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ» ԾՐԱԳԻՐ

**ՉՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ ԱՌԱՏԱԾԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ**



Համայնքում կառուցված նոր պոմպակայանը՝ հազիցած բարձր արդյունավետությամբ պոմպերով:



Համայնքն իր վրա է վերցրել հողային աշխատանքները: Լուսանկարում բնակիչներն օգնում են հետլիցքի աշխատանքներում:

ԱՄՆ ՄՁԳ-ի «Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության» (ԳԱՏՕ) ծրագիրը, համագործակցելով ԱՄՆ ՄՁԳ-ի կողմից ֆինանսավորվող «Ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ օգտագործում» (PURE-Water) ծրագրի հետ, Արամավիրի մարզի Առատաշեն համայնքում իրականացրեց ջրամատակարարման համակարգի բարելավման լայնածավալ աշխատանքներ, մասնավորապես.

- նոր պոմպակայանի և քլորակայանի կառուցում
- ցանցի խողովակները փոխարինվել են ավելի դիմացկուն պոլիէթիլենային խողովակներով՝ հոսակորուստների վերացման նպատակով
- համայնքում՝ ջրաչափական համակարգի տեղադրում՝ խթանելու սպառողների կողմից արդյունավետ ջրօգտագործումը:

Ծրագրի արդյունքում համայնքը կունենա շուրջօրյա ջրամատակարարում (նախկին 5 ժամվա փոխարեն)՝ սանիտարական նորմերի պահպանմամբ: Գյուղում ջրամատակարարման համակարգի բարելավումը կհանգեցնի ջրի և էներգիայի զգալի խնայողության, ինչպես նաև ջրամատակարարման ծառայության ծախսերի արդյունավետ վերականգնման պայմանավորված օգտագործվող ջրի հաշվառման և վճարման համակարգի ներդրմամբ:

Լինելով ծրագրի գործընկեր՝ Առատաշեն համայնքը պատասխանատու է հողային աշխատանքների իրականացման, ինչպես նաև ջրաչափերի ձեռքբերման ու տեղադրման համար:

**Ծրագրային ցուցանիշներ**

- **Ստորերկրյա ջրի խնայողություն՝ տարեկան 557,000 մ<sup>3</sup>**
- **Էներգիայի խնայողություն պոմպակ. հաշվին՝ տարեկան 204 ՄՎտ**
- **Շահառուններ՝ 520 տնտեսություն, 3200 մարդ**
- **Գործընկերներ՝ ԱՄՆ ՄՁԳ PURE-Water ծրագիր, Առատաշեն համայնք**

ԳԱՏՕ ծրագիրը միտված է նվազեցնելու Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների ջրառի ծավալները և ապահովելու ռեսուրսի կայուն պահպանությունը: Ծրագիրն աջակցում է ՀՀ կառավարությանը քաղաքականության մշակման և տեխնիկական լուծումների կիրառման գործում՝ կենսական կարևորություն ունեցող ստորերկրյա ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով: ԳԱՏՕ ծրագիրը լուծելու է ստորերկրյա ջրերին վերաբերող առկա տվյալների թարմացման, որոշումների կայացման գործիքների մշակման, համապատասխան կառույցների մասնագիտական կարողությունների հզորացման, ջրային և էներգետիկ ռեսուրսների արդյունավետ օգտագործման նորարարական տեխնոլոգիաների կիրառման, ինչպես նաև իրավակիրարկման մեխանիզմներին առնչվող բացերի վերացման խնդիրները: <http://www.aspired.wadi-mea.com>